ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշման հավելվածի 4-րդ և 22-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված N 1 հավելվածի 3-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի հունվարի 29-ի N 24-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի ղեկավարի 2019 թվականի հունիսի 21-ի N 273 գրությունը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ներքոհիշյալ աշխատողներին 2019 թվականի հուլիսի 3-ին, մեկ օրով գործուղել գյուղ Մրգաշեն՝ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության *մրցութային* հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար.

1) ***Արփավազդ Բարսեղյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

2) ***Հարություն Ալեքսանյան*** - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ ***Հարություն Ալեքսանյանին*** գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին ներկայացնել գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թվականի հունիսի 25
ք. Հրազդան
N 95-Ա